

Հավելված  
ՀՀ Վայոց ձոր մարզի  
Եղեգնաձոր համայնքի ավագանու  
2022 թվականի հունիսի 8-ի թիվ 72-Ա որոշման

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ  
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ  
հնգամյա զարգացման ծրագիր  
2022-2026թթ.



Կազմեց՝ համայնքի ղեկավար Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ

2022թ.

## Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք.....	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն.....	4
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն.....	4
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը.....	6
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը .....	166
2.4. Պատվիրակված ծառայություններ.....	<b>Error! Bookmark not defined.</b>
2.5. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները <b>Error! Bookmark not defined.</b>	
2.6. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ .....	<b>Error! Bookmark not defined.</b>
2.7. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՄ) վերլուծություն .....	188
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում.....	18
3.1. Համայնքի զարգացման տեսլական .....	19
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ .....	19
4. ՀՀԶԾ ֆինանսավորում .....	23
5. ՀՀԶԾ մոնիթորինգի անձնագիր .....	244

## 1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հարգելի՛ Եղեգնաձոր համայնքի բնակիչներ.

Ձեզ ենք ներկայացնում Եղեգնաձոր համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, որը, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներից՝ մշակում է համայնքի ղեկավարը և նրա աշխատակազմը, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ:

Եղեգնաձոր համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է 2022-2026թթ համար, որը ենթադրում է համայնքի տնտեսական և սոցիալական զարգացում:

Հաշվի առնելով, որ Եղեգնաձոր համայնքն ունի առկա ռեսուրսներ և հնարավորություններ, որոնք կարող են օգտագործվել համայնքի զարգացումն ու զբաղվածությունը խթանելու համար, կազմվել է ռազմավարություն՝ ենթակառուցվածքների զարգացման համար ներդրումներ ներգրավելու, գյուղատնտեսությունը զարգացնելու, երիտասարդների կրթական մշակութային կյանքը աշխուժացնելու ուղղությամբ:

Համայնքի կայուն զարգացման առաջնահերթությունները թեև բազմաթիվ են, սակայն, վերջին իրողություններով պայմանավորված՝ համայնքի համար գերակա խնդիր է մնում անվտանգության ապահովումը, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը:

Եղեգնաձորը կարող է դառնալ Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջային, կրթական, ֆինանսական և գյուղատնտեսական հնարավորություններով աշխատատեղեր ապահովող կենտրոններից մեկը, ինչի համար նախադրյալներն արդեն իսկ ստեղծված են:

Ծրագրի մշակման գործընթացին մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ, հասարակության տարբեր ներկայացուցիչներ՝ ակտիվ քաղաքացիներ, հասարակական կազմակերպություններ, ավագանու անդամներ, բնակավայրերի վարչական ղեկավարներ և այլն:

## 2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

### 2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Եղեգնաձոր համայնքի բնակչության մի մասը 1829-1830 թթ. այստեղ են գաղթել Պարսկահայքի Խոյ և Մալմաստ գավառներից: Եղեգնաձոր այցելած մարդիկ գիտեն պատմական մշակութային բազմաթիվ արժեքների մասին: Եղեգնաձորը Հայաստանի հնագույն բնակավայրերից է: Տեղակայված լինելով պատմական Մետաքսի ճանապարհի և կառուցվող հարավային զբոսաշրջային միջանցքի վրա՝ համայնքն աչքի է ընկնում իր զբոսաշրջային հնարավորություններով և զարգացման միտումներով: Համայնքը հայտնի է պատմամշակութային հուշարձաններով, եկեղեցիներով: Ամենավառ օրինակներից է Սուրբ Աստվածածին եկեղեցին՝ կառուցված 17-րդ դարում, վերանորոգված 19-րդ դարում: Բավականին հայտնի է նաև Քյոշկ ամրոցը, որը կառուցվել է 4-րդ դարում: Ամեն այցելու կցանկանա այցելել Եղեգնաձոր քաղաքի Երկրագիտական թանգարան, ուր պահվում են հետաքրքիր նյութեր և եզակի նմուշներ: Բազմաթիվ պատմամշակութային կենտրոններ՝ Մպիտակավոր եկեղեցի, Սուրբ Աննա եկեղեցի, Գլաձորի համալսարան, Պռոշաբերդ, Գլաձորի թանգարան որոնք գտնվում են բնակավայրերում, որն էլ ապահովում են զբոսաշրջային մեծ ներհոսք: Բնակչության մեծ մասն զբաղվում է գյուղատնտեսությամբ, խաղողագործությամբ, գինեգործությամբ, չորացած մրգերի արտադրությամբ, մեղվաբուծությամբ: Եղեգնաձորում ակտիվորեն աճում է հյուրատնային բիզնեսը, ավելանում է համեսի սրահների թիվը, գաստրո բակերը, որոնք շատ կարևոր են զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման համար:

Եղեգնաձոր խոշորացված համայնքը, որը ներառում է թվով 5 բնակավայրեր՝ Եղեգնաձոր, Գլաձոր, Մալիշկա, Գետափ և Վերնաշեն, կազմավորվել է 2021թ. դեկտեմբերի 5-ին կայացած ընտրությունների արդյունքում:

Ստորև կարող եք տեսնել բնակավայրերը՝ Վայոց ձորի վարչական քարտեզում.

Եղեգնաձոր խոշորացված համայնքը զբաղեցնում՝ 16479.167 հա տարածք, որից

Վայոց ձորի վարչական քարտեզը



Եղեգնաձոր համայնքի հողային ֆոնդի առկայությունը և բաշխումն ըստ բնակավայրերի

Աղյուսակ 1

Բնակավայր	Զբաղեցրած տարածքը՝ հա	Գյուղ նշ. հողեր՝ հա	Վարելահող՝ հա	Բազմամյա տնկարկ՝ հա	Խոտհարք՝ հա	Արոտ՝ հա	Այլ՝ հա
Եղեգնաձոր	24388.70	1843	1877.10	332.85	335.02	6309.56	14035.76
Մալիշկա	8567.37	8111.09	504.6	55.06	155.61	3781.69	3691.15
Գլաձոր	4242.64	3657.2	218.18	38.35	0	687.03	3160.9
Վերնաշեն	6729,32	6527,3	481,33	70,17	176,46	1086,42	9651.19
Գետալի	2162	1914	362	67	0	305	1249

Ստորև ներկայացված աղյուսակում կարող եք տեսնել Եղեգնաձոր համայնքի բնակավայրերի ժողովրդագրական տվյալները.

**Եղեգնաձոր համայնքի բնակավայրերի բնակչության բաշխումն**


*ըստ տարիքային և սեռային խմբերի  
Աղյուսակ 2*

<i>Բնակավայր</i>	<i>Առկա բնակչության թվաքանակ</i>	<i>Տնային տնտեսությունների քանակ</i>	<i>Հաշմանդամություն ունեցող անձանք թվաքանակը</i>	<i>Ընտանեկան նպաստի համակարգում փաստագրված ընտանիքների թիվ</i>	<i>44-օրյա պատերազմի հետևանքով բնակավայրում տուժած ընտանիքների թվաքանակը</i>
<i>Եղեգնաձոր</i>	<i>9561</i>	<i>2582</i>	<i>967</i>	<i>1240</i>	<i>41</i>
<i>Մալիշկա</i>	<i>4823</i>	<i>1507</i>	<i>352</i>	<i>154</i>	<i>56</i>
<i>Գլաձոր</i>	<i>2644</i>	<i>637</i>		<i>122</i>	<i>6</i>
<i>Գետափ</i>	<i>2220</i>	<i>695</i>	<i>60</i>	<i>64</i>	<i>8</i>
<i>Վերնաշեն</i>	<i>1048</i>	<i>305</i>		<i>25</i>	<i>4</i>

**2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը**

*Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն 2022թ. ապրիլի 1-ի դրությամբ*

*Գծապատկեր 2*





*Աղյուսակ 3*

Բյուջե	Գումարը (դրամ)	Տոկոսային հարաբերությունը
Վարչական	844567680	84.85%
Ֆոնդային	150820000	15.15%
Ընդամենը	995387680	

Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը (%), 2022թ. ապրիլի 1-ի դրությամբ

Գծապատկեր 3



*Ծառայությունների բնագավառի համայնքի հիմնական ձեռնարկությունները և հիմնական  
ծառայությունները*

*Աղյուսակ 4*

<b>Բանկեր</b>	<b>Վարկային կազմակերպություններ</b>	<b>Բջջային օպերատորներ</b>	<b>Այլ ծառայություններ կազմակերպություններ</b>	<b>մատուցող</b>
Ազրա բանկ	ՍԵՖ Ինտերնեյշնլ միկրոֆինանսական կազմակերպություն	ՎԻՎԱ-ՍՏՍ	«ՀԱՅՓՈՍ ՓԲԸ»	
Արդշինբանկ	«Արեգակ» ՈԻՎԿ	Յուքոմ	«Վեոլիա ջուր» Եղեգնաձորի մասնաձյուղ	
ՎՏԲ Հայաստան	«ՖԱՍԹ ԿՐԵԴԻՏ» ՈԻՎԿ	Բիլայն	«Միասնական սոցիալական ծառայության» Եղեգնաձորի բաժին	
Յունիբանկ	«Ֆինքս» ՈԻՎԿ		«Գազպրոմ» ՀԲԸ Եղեգնաձորի մասնաձյուղ	
Հայեկոնոմբանկ	«ԷԿԼՕՏ» ՈԻՎԿ		«Հայաստանի էլեկտրական ցանցեր» Եղեգնաձորի մասնաձյուղ	
	«ԿԱՍՈՒՐՋ» ՈԻՎԿ		Մոբայլ Սենթր բջջային օպերատորների խանութ	
	«Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈԻՎԿ			
	«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈԻՎԿ			



*Զբոսաշրջային հետաքրքրություններ կայացնող բնական, պատմական և մշակութային հուշարձաններ, կազմակերպվող միջոցառումներ և այլ հետաքրքրություններ*

*Աղյուսակ 5*

Սուրբ Աստվածածին եկեղեցի
Եղեգնաձորի երկրագիտական թանգարան
Հայաստանի ազգային պատկերասրահի Եղեգնաձորի մասնաճյուղ
Քյոշկ ամրոց
Սպիտակավոր եկեղեցին, որը կառուցվել է XII-րդ դարում Պոռոջանների կողմից: 20-րդ դարի 80-ական թվականներին հուշարձանի տարածքում է ամփոփվել հայ պետական, ռազմական գործիչ, քաղաքագետ և իմաստասեր Գարեգին Նժդեհի աճյունի մի մասը:
Թանահատի վանքը, որտեղ 13-րդ դարում գործել է Գլաձորի համալսարանը
<Սուրբ Հակոբ>> եկեղեցին կառուցված՝ 18-րդ դարում
Համայնքի շրջակայքում պահպանվել են Պոռոջան իշխանների բերդի պարսպի մեծ մասը, խաչքարեր, գերեզմանատներ:

*Եղեգնաձոր քաղաքի դպրոցական, նախադպրոցական և արտադպրոցական կրթական հաստատություններ, ԲՈԻՀ-եր*

*Աղյուսակ 6*

<i>Ուսումնական հաստատության անվանումը</i>	<i>Շահառուների թիվ</i>	<i>Աշխատողների թիվ</i>
<i>Եղեգնաձոր քաղաքի թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ</i>	<i>106</i>	<i>17</i>
<i>Եղեգնաձոր քաղաքի թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ</i>	<i>75</i>	<i>15</i>
<i>Եղեգնաձոր քաղաքի թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ</i>	<i>115</i>	<i>16</i>
<i>Եղեգնաձորի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն</i>	<i>100</i>	<i>9</i>
<i>Եղեգնաձորի գեղարվեստի դպրոց</i>	<i>54</i>	<i>10</i>
<i>Եղեգնաձորի մարզադպրոց</i>	<i>150</i>	<i>15</i>
<i>Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց</i>	<i>550</i>	<i>52</i>
<i>Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոց</i>	<i>585</i>	<i>58</i>
<i>Եղեգնաձորի ավագ դպրոց</i>	<i>212</i>	<i>35</i>
<i>Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղ</i>	<i>250</i>	<i>33</i>
<i>Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ</i>	<i>300</i>	<i>46</i>

*Մալիշկա բնակավայրի դպրոցական, նախադպրոցական և արտադրպրոցական կրթական հաստատություններ*

*Աղյուսակ 7*

<i>Ուսումնական հաստատության անվանումը</i>	<i>Շահառուների թիվ</i>	<i>Աշխատողների թիվ</i>
<i>Մալիշկա բնակավայրի թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ</i>	<i>42</i>	<i>12</i>
<i>Մալիշկա բնակավայրի թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ</i>	<i>47</i>	<i>15</i>
<i>Մալիշկա բնակավայրի մարզադպրոց ՀՈԱԿ</i>	<i>100</i>	<i>7</i>
<i>Մալիշկա բնակավայրի թիվ 1 դպրոց</i>	<i>288</i>	<i>39</i>
<i>Մալիշկա բնակավայրի Ս. Վ Լոմոնոսովի անվան միջնակարգ դպրոց</i>	<i>211</i>	<i>32</i>
<i>Մալիշկա բնակավայրի մշակույթի տուն</i>	<i>500</i>	<i>2</i>

*Գլաձոր բնակավայրի դպրոցական, նախադպրոցական և արտադրպրոցական կրթական հաստատություններ*

*Աղյուսակ 8*

<i>Ուսումնական հաստատության անվանումը</i>	<i>Շահառուների թիվ</i>	<i>Աշխատողների թիվ</i>
<i>Գլաձոր բնակավայրի մանկապարտեզ ՀՈԱԿ</i>	<i>65</i>	<i>15</i>
<i>Գլաձորի միջնակարգ դպրոց</i>	<i>278</i>	<i>37</i>
<i>Գլաձորի մշակույթի տուն</i>	<i>51</i>	<i>2</i>

*Գետալի բնակավայրի դպրոցական, նախադպրոցական և արտադրպրոցական կրթական հաստատություններ*

*Աղյուսակ 9*

<i>Ուսումնական հաստատության անվանումը</i>	<i>Շահառուների թիվ</i>	<i>Աշխատողների թիվ</i>
<i>Գետալի բնակավայրի մանկապարտեզ ՀՈԱԿ</i>	<i>75</i>	<i>18</i>
<i>Գետալի բնակավայրի միջնակարգ դպրոց</i>	<i>258</i>	<i>40</i>
<i>Գետալի բնակավայրի մշակույթի տուն</i>	<i>90</i>	<i>1</i>

*Վերնաշեն բնակավայրի դպրոցական, նախադպրոցական և արտադպրոցական կրթական հաստատություններ*

*Աղյուսակ 10*

<i>Ուսումնական հաստատության անվանումը</i>	<i>Շահառուների թիվ</i>	<i>Աշխատողների թիվ</i>
<i>Վերնաշեն բնակավայրի մանկապարտեզ ՀՈԱԿ</i>	<i>50</i>	<i>10</i>
<i>Վերնաշեն բնակավայրի միջնակարգ դպրոց</i>	<i>106</i>	<i>30</i>
<i>Վերնաշեն բնակավայրի մշակույթի տուն</i>	<i>50</i>	<i>1</i>

*Առողջապահական հաստատություններ*

*Աղյուսակ 11*

<i>Առողջապահության հաստատություն</i>	<i>տեսակը</i>	<i>բնակավայր</i>
<i>Եղեգնաձորի բժշկական կենտրոն</i>	<i>հիվանդանոց</i>	<i>Եղեգնաձոր</i>

*Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ*

*Աղյուսակ 12*

<i>Բնակավայրի անվանումը</i>	<i>Ընտանիքների թիվը</i>
<i>Եղեգնաձոր քաղաք</i>	<i>1240</i>
<i>Գլաձոր բնակավայր</i>	<i>122</i>
<i>Գետափ բնակավայր</i>	<i>64</i>
<i>Մայիշկա բնակավայր</i>	<i>154</i>
<i>Վերնաշեն բնակավայր</i>	<i>25</i>

**Եղեգնաձոր քաղաք**

*Զբոսաշրջություն:* Եղեգնաձորը Հայաստանի հնագույն բնակավայրերից է: Տեղակայված լինելով պատմական Մետաքսի ճանապարհի և կառուցվող հարավային զբոսաշրջային միջանցքի վրա՝ քաղաքն այժմ է ընկնում իր զբոսաշրջային հնարավորություններով և զարգացման միտումներով:

Եղեգնաձոր համայնքով է անցնում Հայաստանի հիմնական զբոսաշրջային վայրեր տանող ճանապարհը՝ Տաթև և Զերմուկ:

2022թ.-ի դրությամբ համայնքում գործում է 3 հյուրանոց, 25 հյուրատուն, 3 վրանային հանգստի հնարավորությամբ հյուրատուն (camping), 2 գաստրոբակ, 7 ռեստորան, արագ սննդի 10 կետ: Եղեգնաձոր քաղաքում բնակչության շուրջ 9.5%-ը՝ 1000 մարդ, զբաղված է զբոսաշրջության և սպասարկման ոլորտներում:

*Գյուղատնտեսություն և սննդի վերամշակում:* Համայնքում գյուղատնտեսության հիմնական ճյուղերն են անասնապահությունը, այգեգործությունը, պտղաբուծությունը, դաշտավարությունը, մեղվաբուծությունը:

Եղեգնաձորը հայտնի է իր գինեգործությամբ, այդ մասին է վկայում 2018 թվականին Եղեգնաձոր համայնքի թիվ 1 հիմնական դպրոցի տարածքում հայտնաբերված միջնադարյան գինու հնձանը, որը կարող է դառնալ նոր զբոսաշրջային վայր:

1990 թվականից գործում է «Գետնատուն» գինու գործարանը, որտեղ արտադրվում են խաղողի և նոան գինիներ, մրգային օղիներ: Արտադրանքը հիմնականում արտահանվում է Ռուսաստան: Եղեգնաձոր համայնքում գտնվում են 3 գինու գործարաններ և նոր գործարանների կարիք կա, քանի որ մթերման ժամանակ չեն կարողանում ընդունել տարածաշրջանի բերքն ամբողջությամբ:

Ամենախոշոր աճը գրանցվել է հետևյալ ոլորտներում՝ սննդի արդյունաբերություն՝ խաղող, բանջարեղեն, մրգեր-պտուղներ և կաթնամթերք: Տարեկան համեմատաբար մեծ շրջանառությամբ աչքի է ընկնում «Եղեգնաձորի պահածոների» գործարանը:

Եղեգնաձոր համայնքում պոտենցիալ ներդրողները հատկապես հետաքրքրված են էկոլոգիապես մաքուր արտադրության կազմակերպմամբ:

*Արդյունաբերության այլ ճյուղեր:* Եղեգնաձորում գործում է ռելեի գործարանը, որտեղ արտադրվում են ավտոմեքենաների ռելեներ: Ռելեները հիմնականում արտահանվում են Ռուսաստան և օգտագործվում ինքնաթիռաշինության մեջ:

*Կրթություն:* Եղեգնաձոր համայնքը լինելով որպես մարզկենտրոն համայնքում կենտրոնացված է միջին մասնագիտական և բարձրագույն կրթությունը: Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջը մարզում միջին մասնագիտական և արհեստագործական կրթություն իրականացնող միակ կրթական հաստատությունն է: Ուսուցանվող մասնագիտություններն ընտրելիս կարևորվում են երկու հիմնական չափանիշ՝ աշխատաշուկայի պահանջարկը և մարզի սոցիալ-տնտեսական զարգացման միտումներին համապատասխանությունը: Այս տեսանկյունից կարելի է առանձնացնել հատկապես 3 մասնագիտության ուսուցում՝ «Զբոսաշրջություն», «Փայտագործություն», «Գինեգործություն և հյուրերի արտադրություն»: Հաշվի առնելով մարզում գինեգործության ծավալների ընդլայնումը և տուրիզմի զարգացման հարուստ ներուժը՝ քոլեջը շեշտը դրել է մրցունակ կադրերով այս երկու կարևորագույն ոլորտները համալրելու խնդրի վրա: Քոլեջը, մի շարք միջազգային կազմակերպությունների հետ համագործակցելով, ձեռք է բերել հարուստ նյութատեխնիկական բազա, որը նպաստում է որակյալ կրթություն ապահովելուն: Մասնավորապես, քոլեջում հիմնվել է գինու փոքրիկ արտադրամաս, ներդրվել է գինեգործության ուսուցման դուալ՝ ուսուցում և գործնական հմտություններ համակարգը: Քոլեջում տարբեր լաբորատորիաների և առարկայական կաբինետների առկայությունը, զարգացման և վերապատրաստման տարբեր ծրագրերում ընդգրկված լինելու հանգամանքը, բանհիմաց և բարձրակարգ մասնագետներով համալրված աշխատակազմը որակյալ ու հմուտ կադրեր պատրաստելու և մարզի աշխատաշուկայի պահանջարկը որոշ չափով բավարարելու գրավական են:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղը գործում է 2008 թվականից: Համալսարանում սովորում է 250 ուսանող՝ կառավարում, ֆինանսներ, հաշվապահություն մասնագիտություններով: Համալսարանը տրամադրում է առկա և հեռակա բակալավր, ինչպես նաև մագիստրատուրայի կրթական ծրագրեր: Համայնքը լինելով մարզկենտրոն, այստեղ են կենտրոնացված բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, հաշվապահական գրասենյակների մասնաճյուղերը, որն ուսանողներին

հնարավորություն է տալիս սովորել իրենց համայնքում և աշխատանք գտնել: Ըստ համալսարանի տվյալների՝ շրջանավարտների 90%-ն աշխատանք է գտնում համայնքում:

Եղեգնաձոր քաղաքում գործում է համայնքային ենթակայության 6 կառույց՝ 3 մանկապարտեզ, գեղարվեստի դպրոց, մանկական ստեղծագործական կենտրոն, մարզադպրոց, ինչպես նաև պետական կառույցներ՝ 2 հիմնական դպրոց՝ նախատեսված 1135 աշակերտի համար, 1 ավագ դպրոց՝ նախատեսված 212 աշակերտի համար, երաժշտական դպրոց, մշակույթի տուն, պարի, կարատեի և այլ մարզաձևերի խմբակներ, մասնավոր կրթական կենտրոններ և մանկապարտեզներ:

*Առողջապահություն:* Համայնքում գործում է 1 ժշկական և 5 ստոմատոլոգիական կենտրոն, 9 դեղատուն: Եղեգնաձորի բժշկական կենտրոնում նախատեսված է 47 մահճակալ: 2018թ-ին ՀՀ կառավարությունը՝ Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ, հաստատել է Եղեգնաձոր քաղաքում նոր բժշկական կենտրոնի կառուցումը, որը համալրված է լինելու արդի տեխնոլոգիաներով և վերապատրաստված մասնագետներով: Հիվանդանոցի կառուցումն ընթացքի մեջ է և նախատեսվում է ավարտին հասցնել մինչև 2023 թվականը:

## **Մալիշկա բնակավայր**

Մալիշկա բնակավայրը գտնվում է Եղեգնաձոր համայնքի կազմում, մարզկենտրոնից 7 կմ հարավ-արևելք, Արփա գետի աջ ափին, պատմական Մոզ քաղաքի հարևանությամբ:

Մալիշկա բնակավայրը վերաբնակեցվել է 1828-1831 թթ. Իրանի Խոյ և Սալմաստ գավառներից ներգաղթած հայ ընտանիքներով: Այդ տարիներին վերաբնակեցվել է 42 ընտանիք:

Ներկայումս բնակավայրն ունի 1507 տնտեսություն: Գյուղի տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է:

Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղաբուծությամբ, անասնապահությամբ, և մեղվաբուծությամբ:

Բնակավայրում որպես պատմամշակութային կառույցներ հայտնի են Մբ. Գևորգ եկեղեցի (1850 թ.), իսկ 3 կմ հարավ-արևելք պատմական Մոզ քաղաքի ավերակները (VII-XV դդ.), որն այժմ հանդիսանում է հանգստի գոտի իր սառնորակ ինքնաբուխ աղբյուրներով և գեղատեսիլ բնությամբ:

Մալիշկայում ներկայումս գործում է սուրբ Աննա եկեղեցին, որի հարակից բարեկարգ տարածքը հարմարավետ հանգստի գոտի է դարձել բնակչության, առանձնապես երիտասարդների համար:

Գյուղում գործում է 2 միջնակարգ դպրոց, 2 մանկապարտեզ, մարզադպրոց, մշակույթի տուն, առողջապահական կենտրոն, առևտրի 16 կետ, զովացուցիչ ջրերի 2 արտադրամաս, ապահովված է խմելու և ոռոգման ջրով:

Խորհրդային տարիներին գյուղում գործել է կոնդեսատորների գործարան շուրջ 600 աշխատատեղով, որը այնուհետև վերափոխվել է թանկարժեք քարերի մշակման և ոսկու վերամշակման արտադրամասի, սակայն այսօր չի գործում:

## **Գետափ բնակավայր**

*Զբոսաշրջություն:* Գետափ բնակավայրը Հայաստանի հնագույն բնակավայրերից է: Այն հիմնադրվել է 1828թ-ին Խոյից և Սալմաստից տեղափոխված մի քանի ընտանիքների կողմից: Տեղակայված լինելով

պատմական Մետաքսի ճանապարհի և կառուցվող հարավային զբոսաշրջային միջանցքի վրա՝ բնակավայրը աչքի է ընկնում իր զբոսաշրջային հնարավորություններով և զարգացման միտումներով:

Գետափ բնակավայրով է անցնում Հայաստանի հիմնական զբոսաշրջային վայրեր տանող ճանապարհը՝ Տաթև, Ջերմուկ և Սևան:

2005-2006 թթ հնագիտական պեղումների արդյունքում << Դադայի ձոր >> կոչվող տարածքում հայտնաբերվել է հնագույն ամրոցի և բնակատեղիի ավերակներ, որը մեծ հետաքրքրություն է առաջացրել հատկապես զբոսաշրջիկների շրջանում:

*Գյուղատնտեսություն և սննդի վերամշակում:* Գետափ բնակավայրում գյուղատնտեսության հիմնական ճյուղերն են անասնապահությունը, այգեգործությունը, պտղաբուծությունը, դաշտավարությունը, մեղվաբուծությունը:

Գետափը հայտնի է իր գինեգործությամբ: Գետափ բնակավայրում է գտնվում 1938-1939թթ հիմնադրված Գետափի գինու գործարանը, որտեղ արտադրվում է խաղողի գինիներ, մրգային օղիներ: Արտադրանքը հիմնականում արտահանվում է արտասահմանյան երկրներ:

Ամենախոշոր աճը գրանցվել է հետևյալ ոլորտներում՝ սննդի արդյունաբերություն՝ խաղող, բանջարեղեն, մրգեր, պտուղներ:

Գետափ բնակավայրում ներդրողները հետաքրքրված են նոր այգիների հիմնմամբ:

*Կրթություն-* Գետափ բնակավայրը ունի 1 միջնակարգ դպրոց, որտեղ հաճախում է 258 աշակերտ: Գետափում գործում է նաև մանկապարտեզ, որտեղ հաճախում են 70 երեխա: Գետափի մշակույթի տանը գործում են պարի, դիսկո, սամունքի, թատերական, երգեցողության խմբակներ, որտեղ հաճախում է 90 երիտասարդ:

*2022-2026թթ համար նախատեսվում է ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացնել մի շարք տնտեսական և սոցիալական ոլորտի ծրագրեր, մասնավորապես՝*

- ✓ *Ճանապարհաշինություն*
- ✓ *Լուսավորության ցանցի կառուցում*
- ✓ *Այլընտրանքային էներգիայի կիրառություն*
- ✓ *Կոյուղագծերի կառուցում*
- ✓ *Աղետների ռիսկերի նվազեցում*
- ✓ *Խաղահրապարակների նորոգում, նոր խաղասարքերի ձեռքբերում*
- ✓ *Տնտեսվարողների համար բարենպաստ միջավայրի ստեղծում*
- ✓ *Զբոսաշրջության և գյուղատնտեսության զարգացման համար նախադրյալների ստեղծում*
- ✓ *Տեղական նշանակության բիզնես ծրագրերի աջակցություն*

## **Վերնաշեն բնակավայր**

Վերնաշեն բնակավայրը գտնվում է մարզկենտրոն Եղեգնաձորից 5կմ հյուսիս-արևելք: Բնակավայրը հիմնադրել են 1827 թվականին Պարսկահայքի Սալմաստ գավառից ներգաղթածները: Վերնաշեն բնակավայրն ունի պատմամշակութային հուշարձաններ, տեսարժան վայրեր:

Զբոսաշրջություն: Բնակավայրն ունի զբոսաշրջության համար հետաքրքրություն ներկայացնող եկեղեցիներ՝ Թանահատի վանքը, Սուրբ Խաչ եկեղեցին, Գլաձորի համալսարանի թանգարանը, խաչքարեր:

Բնակավայրում գործում է 1 հյուրատուն:

Գյուղատնտեսություն: Բնակավայրում գյուղատնտեսության հիմնական ճյուղերն են այգեգործությունը, պտղաբուծությունը, անասնապահությունը, մեղվաբուծությունը: Բնակչությունը առավելապես զբաղվում է խաղողի այգիների մշակմամբ:

Բնակավայրում գինու գործարանի առկայությունը հնարավորություն կտա խաղողը մթերել տեղում, որը կնպաստի խաղողագործության զարգացմանը:

Բնակավայրում գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի 16,6%-ը կազմում են բնական արոտները, որոնց որոշակի մասը հեռագնա են:

<< Ռազմավարական զարգացման գործավարություն >> ՀԿ-ի հետ համագործակցության շնորհիվ 2016թվականին բնակավայրում իրականացվել է արոտավայրերի ջրարբիացման ծրագիրը: Այսինքն բնակավայրում առկա են բավարար հնարավորություններ անասնապահության ոլորտի հետագա զարգացման համար:

Բնակավայրում պանրի գործարանի կառուցումը հնարավորություն կտա ֆերմերներին տեղում մթերել կաթը և մշակել:

Կրթություն: Բնակավայրում գործում են համայնքային ենթակայության 1 մանկապարտեզ, մշակույթի տուն և 1 միջնակարգ դպրոց:

Առողջապահություն: Բնակավայրն ունի 1 բուժական մանկական կետ:

## **Գլաձոր բնակավայր**

Գլաձոր բնակավայրի տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն է (անասնապահություն, հողագործություն, մեղվապահություն): Այստեղ կլիման նպաստավոր է այգեգործության և խաղողագործության համար: Գլաձորում արտադրվում է բազմատեսակ մթերքներ, որոնց մեջ գերակշռող մաս են կազմում մրգերը:

Գլաձոր բնակավայրը մեծ ներուժ ունի տուրիզմի զարգացման համար: Բնակավայրի տարածքում է գտնվում Սպիտակավոր վանական համալիրը (կառուցվել է 13-րդ դարում Պռոշյանների հովանավորությամբ): 1980-ական թվականներին համալիրի տարածքում է ամփոփվել հայ պետական, ռազմական գործիչ, քաղաքագետ-իմաստասեր Գարեգին Նժդեհի աճյունի մի մասը, որն այնտեղ հասել է նրա եղբոր և մի խումբ նվիրյալների ջանքերով՝ հաշվի առնելով գորավարի ցանկությունը:

Բնակավայրի տարածքում են գտնվում նաև Պռոշյաբերդը, Սուրբ Հակոբ (Սուրբ Խաչ) եկեղեցին, որը կառուցվել է 18-րդ դարում: Վերջինս գործող եկեղեցի է, վերանորոգվել է 2010-2011 թթ.:

Բնակավայրում կան բազմաթիվ մատուռներ և խաչքարեր:

*2022-2026թթ համար Գլաձոր բնակավայրում նախատեսվում է իրականացնել մի շարք տնտեսական և սոցիալական ոլորտի ծրագրեր, մասնավորապես՝*

- ✓ *Ճանապարհների ասֆալտապատում*
- ✓ *Թաղամասերի լուսավորության ցանցի կառուցում*

- ✓ *Գերեզմանատների ցանկապատում*
- ✓ *Խմելու ջրի պաշարների ավելացում*
- ✓ *Խաղահրապարակի բարեկարգում*
- ✓ *Ոռոգման գծի ավելացում*
- ✓ *Կոյուղագծերի կառուցում*
- ✓ *Մպիտակավոր Սուրբ Աստվածածին վանքի ճանապարհի վերանորոգում*
- ✓ *Մշակույթի շենքի տարածքում մարգասրահի կառուցում*
- ✓ *Զբոսաշրջության և գյուղատնտեսության զարգացման համար նախադրյալների ստեղծում*

**Գլաձորի տնտեսության մրցակցային առավելությունները**

- *Զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ, բարենպաստ կլիմա և բազմաթիվ տեսարժան վայրեր, տուրիստական բարձր գրավչություն:*
- *Բարձրագույն կրթություն ունեցող բնակիչների բարձր տեսակարար կշիռ:*
- *Որակյալ մասնագետների առկայություն:*
- *Կրթական որակյալ հաստատությունների և ենթակառուցվածքների առկայություն:*

**2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը**

- *2022-2026թթ համար նախատեսվում է ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ իրականացնել մի շարք տնտեսական և սոցիալական ոլորտի ծրագրեր, մասնավորապես՝*
  - ✓ *Ճանապարհաշինություն*
  - ✓ *Լուսավորության ցանցի կառուցում*
  - ✓ *Այլընտրանքային էներգիայի կիրառություն*
  - ✓ *Կոյուղագծերի կառուցում*
  - ✓ *Ոռոգման ցանցերի կառուցում*
  - ✓ *Բազմաբնակարան բնակելի շենքերի բակերի բարեկարգում, խաղահրապարակների տեղադրում*
  - ✓ *Հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարությունների ստեղծում*
  - ✓ *Աղետների ռիսկերի նվազեցում*
  - ✓ *Ապաստարանների բարեկարգում, կահավորում*
  - ✓ *Նախադպրոցական և արտադպրոցական կրթական կենտրոնների բարելավում, ավելացում*
  - ✓ *Համայնքում առկա այգիների և խաղահրապարակների նորոգում, նոր խաղասարքերի ձեռքբերում*
  - ✓ *Համայնքի համար անհրաժեշտ կոմունալ և գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում*
  - ✓ *Տնտեսվարողների համար բարենպաստ միջավայրի ստեղծում*
  - ✓ *Զբոսաշրջության և գյուղատնտեսության զարգացման համար նախադրյալների ստեղծում*
  - ✓ *Տեղական նշանակության բիզնես ծրագրերի աջակցություն*



- *Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հետ համատեղ իրականացվում է 3 ծրագիր*
  - ✓ *Նոր ավան թաղամասի կոյուղագծի կառուցում/ բնակիչների կյանքի որակի բարելավում, սանիտարահիգիենիկ վիճակի ստեղծում/*
  - ✓ *Արևային կայանների տեղադրում / այլընտրանքային էներգիայի կիրառություն, նորարարական լուծումների կիրառում/*
  - ✓ *Համայնքի համար անհրաժեշտ տեխնիկայի ձեռքբերում / համայնքի բնակիչների կյանքի որակի բարելավում, աղբահանության պատշաճ կազմակերպում, գյուղատնտեսության զարգացում/:*
- *Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության հետ Գլաձոր բնակավայրում իրականացվում է 1 ծրագիր*
  - ✓ *Ավտոպարկի և վարձակալական տարածքների կառուցում*
- *տեղացի և արտասահմանյան բարերարների կողմից իրականացվող ծրագրերը*
  - ✓ *մանկապարտեզների համար խաղահրապարակներ, անկողնային պարագաների տրամադրում*
  - ✓ *Արցախյան 44-օրյա պատերազմում զոհված և վիրավորում ստացած զինծառայողների աջակցության ծրագրեր*
- *համայնքի վարչական տարածքում մասնավոր ընկերությունների կողմից նախատեսվող (շարունակվող) ծրագրերը, ներդրումները և միջոցառումները:*
  - ✓ *Հասարակական կազմակերպությունների կողմից նախաձեռնվող միջոցառումներ/ կրթական ծրագրեր, start up-երի ֆինանսավորում և այլն:*

2.4. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Աղյուսակ 13

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> <li>• Աշխարհագրական դիրք՝ Եղեգնաձորով է անցնում Երևանի հետ կապող Սյունիքի մարզի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջպետական նշանակության ճանապարհը</li> <li>• Բնական և պատմամշակութային հարուստ ռեսուրսներ՝ բնության պահպանվող տարածքներ, քարանձավներ և միջնադարյան հայտնի պատմամշակութային կոթողներ</li> <li>• Գինու, պանրի (հատկապես այծի), չրի, պահածոների արտադրության ամբողջական արժեչափաների առկայություն</li> <li>• Հայաստանի առաջատար գինեգործական և զբոսաշրջային կլաստերների կենտրոն</li> <li>• Հանդիսանում է մարզի միջին մասնագիտական, արհեստագործական, բարձրագույն կրթության ծառայությունների կենտրոն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Որակյալ կադրերի պակաս</li> <li>• Զբոսաշրջային և բիզնես ենթակառուցվածքների ոչ բավարար զարգացվածություն</li> <li>• Համայնքային ենթակայության կառույցների և գույքի բարոյական և ֆիզիկական մաշվածություն</li> <li>• Տուրիզմի տեղեկատվական կենտրոնի և զբոսաշրջային պրոդուկտների/փաթեթների բացակայություն</li> <li>• Տուրիստական գործակալությունների բացակայություն</li> <li>• Բրենդի և տարածքի առաջնական միջոցառումների բացակայություն</li> </ul>
Հնարավորություններ	Սպառնալիքներ
<ul style="list-style-type: none"> <li>• Հայաստանում զարգացող զբոսաշրջությունը, որը հնարավորություն է տալիս ներգրավել նոր զբոսաշրջիկների դեպի Եղեգնաձոր</li> <li>• Տարածաշրջանում գինեգործության և զբոսաշրջության զարգացման բարձր տեպեր</li> <li>• Մարզում կազմակերպվող փառատոններ՝ Արենու գինու փառատոն, Խաչիկի գաթայի փառատոն, Ջերմուկի «Ձնեմարդուկ» փառատոն</li> <li>• Հյուսիս-հարավ ավտոմայրուղու կառուցում, որը կկրճատի Երևանից ճանապարհորդելու տևողությունը և կբարելավվի որակը</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Նախիջևանի կողմից ադրբեջանական ագրեսիայի հնարավորություն</li> <li>• Երիտասարդների արտագաղթ</li> <li>• Ծնելիության ցածր մակարդակ</li> <li>• Խոշոր հանքարդյունաբերական նախագծեր, որոնք բնապահպանական ռիսկեր են ստեղծում</li> </ul>

### 3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

#### 3.1. Համայնքի զարգացման տեսլական

Եղեգնաձոր համայնքը կդառնա Վայոց ձորի մարզի կրթական, տրանսպորտային, ֆինանսական և բիզնես ծառայությունների առաջատար կենտրոն՝ ապահովելով բարենպաստ ենթակառուցվածքներ ագրոբիզնեսի, զբոսաշրջության և վերմշակող արդյունաբերության զարգացման համար:

#### 3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

##### Նպատակներ

1. Դառնալ Հայաստանում էկոտուրիզմի հիմնական ուղղություններից մեկը:
2. Համայնքը գյուղատնտեսության, գինեգործության և զբոսաշրջության ոլորտում տարածաշրջանային կրթական կենտրոն է՝ ապահովելով մրցունակ կադրերով տարածաշրջանային բիզնեսներին:
3. Ունենալ մասնավոր հատվածի զարգացմանը նպաստող բարելավված ենթակառուցվածքներ:

Սահմանված նպատակներին հասնելու համար համայնքը զարգացնելու է իր զբոսաշրջային ենթակառուցվածքները/ քարտեզագրելու է զբոսաշրջային վայրերը, աջակցելու է էկոտուրիզմի զարգացման կենտրոնի և նոր հյուրատների ստեղծմանը/, աջակցելու է մարդկային կապիտալի զարգացմանը և արտադրանքի որակի բարելավմանը, օժանդակելու է փոքր և միջին բիզնեսի զարգացմանը՝ քարտեզագրելու է գործող և չօգտագործվող շենք-շինությունները:

Համայնքը նախատեսում է իրականացնել տեղական ներդրումային համաժողով՝ թիրախավորելով արտերկրում բնակվող գործարար համաքաղաքացիներին:

Զարգացման ծրագրի իրագործման համար անհրաժեշտ ծախսերի հիմնական աղբյուրները հայտնի են: Ծախսերի որոշ մասը կֆինանսավորվի համայնքային բյուջեից, իսկ մյուս մասն ապահովվելու է ՀՀ կառավարության, միջազգային կազմակերպությունների (GIZ), Սոցիալ-տնտեսական քաղաքականության տարածաշրջանային հետազոտությունների ինստիտուտ ՀԿ, Եվրոմիության դրամաշնորհների և անհատ ներդրողների միջոցով:

#### ❖ Նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը.

Ապահովել նախադպրոցական տարիքի բոլոր երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական ուսումնական հաստատություններում՝ ավելացնելով խմբասենյակների թիվը, նորոգելով մանկապարտեզները և կառուցելով նոր մանկապարտեզներ:

Շարունակել նախադպրոցական կրթության որակի բարելավումը՝ վերապատրաստումներ, մասնագիտական փորձի փոխանակումներ կազմակերպելու միջոցով, սահմանելով դաստիարակի որակավորման տարակարգերի չափորոշիչներ, հնարավորություն ընձեռնելով երկարամյա փորձ ունեցող դաստիարակի օգնականներին մասնագիտական կրթություն ստանալու և աշխատանքային առջընթացի համար:

Շարունակել արտադպրոցական կրթության որակի բարելավումը հաստատություններում՝ պարապմունքների կազմակերպման ժամանակակից մեթոդների կիրառման, վերապատրաստումների, փորձի փոխանակման ծրագրերի, որակավորման տարակարգերի

չափորոշիչներ սահմանելու և բարձր առաջադիմություն ունեցող լավագույն սաներին՝ բարձրագույն մասնագիտական նպատակային կրթություն ստանալու և աշխատանք ապահովելու միջոցով:

**❖ Համայնքում մարզական կյանքի կազմակերպումը, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը.**

Մպորտի և առողջ ապրելակերպի խթանման նպատակով արդիականացնել Եղեգնաձոր քաղաքի մարզադպրոցի դահլիճը, վերանորոգել մարզադաշտը, ձեռք բերել ժամանակակից վազքուղի, ստեղծել բասկետբոլի պրոֆեսիոնալ սկումբ, տարբեր մարզաձևերից մրցաշարեր կազմակերպել, քաղաքում և բնակավայրերում կառուցել բազմաֆունկցիոնալ խաղահրապարակներ, տեղադրել մարզասարքեր և այլն:

**❖ Համայնքի մշակութային կյանքի կազմակերպումը.**

Պահպանել, զարգացնել և ապահովել մշակութային ավանդույթների ընդգրկվածությունը: 2022 թվականից Եղեգնաձոր համայնքում բացվել են բոլոր բնակավայրերի մշակութային տները և նշանակվել են պատասխանատուներ՝ բնակավայրերում մշակութային կյանքը զարգացնելու համար: Եղեգնաձոր քաղաքում մշակույթի տունը համայնքի ենթակայության տակ չի գտնվում:

Թանգարանների և գրադարանների հետ կապն աշխուժացնել, ստեղծել գրադարանային գրավիչ միջավայր և համալրել գրադարանների գրքային ֆոնդը, ստեղծել գրադարանների աշխատակիցների խրախուսման համակարգ՝ նրանց մասնագիտական պատրաստվածության և որակավորման հիման վրա:

**❖ Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումը.**

Համայնքում երիտասարդության ակտիվության բարձրացման և պահպանման նպատակով ապահովել երիտասարդության ռազմավարական ծրագրերի հետևողական իրականացումը, նպաստել համայնքի կառավարման և որոշումների կայացման հարցում երիտասարդների ակտիվ մասնակցությունը, երիտասարդների համար իրականացնել դրամաշնորհային փոքրիկ ծրագրեր՝ համայնքում սեփական նախաձեռնություններն իրականացնելու համար:

**❖ Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը, համայնքում ծնելիության և բազմազավակության խթանումը (տեղական սոցիալական ծրագիր).**

Ապահովել խոցելի ընտանիքների բնակիչների բարեկեցիկ կյանքը համայնքային սոցիալական աշխատանքի խթանման միջոցով, խոցելի ընտանիքների տնտեսական դիմակայունության բարձրացման /գյուղական բնակավայրերում անասնապահություն, ջերմոցային տնտեսությունների ստեղծում, մասնագիտական կարողությունների զարգացում/, հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի հնարավորության և սոցիալ-հոգեբանական ծառայությունների ընդլայնման, հատուկ կարիքներով մեծահասակների ցերեկային խնամքի ծառայությունների ստեղծման միջոցով և այլն:

**❖ Համայնքում գյուղատնտեսության զարգացման խթանումը.**

Ապահովել գյուղատնտեսության զարգացումը ռոռզման և խմելու ջրերի հին համակարգերի հիմնանորոգման, նոր համակարգերի ստեղծման, ավանդական գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացման աջակցության և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ գյուղատնտեսության զարգացման՝ փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման, տոհմային խոշոր եղջերավոր կենդանիների ձեռքբերման, ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների ստեղծման և փոքր, միջին ու մեծ ջերմոցների ստեղծման միջոցով:

❖ **Համայնքում զբոսաշրջության զարգացման խթանումը.**

Ապահովել զբոսաշրջության զարգացումը՝ զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծման աջակցության, բնակավայրերը զբոսաշրջային տեսանկյունից ավելի գրավիչ դարձնելու, զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի ստեղծման, պատմամշակութային հուշարձանների պահպանության աջակցության նպատակով շահագրգիռ կողմերի հետ համագործակցության, զբոսաշրջության զարգացմանն ուղղված ծրագրեր իրականացնող կազմակերպությունների և անհատների հետ համագործակցության միջոցով: Ստեղծել համայնքի բրենդ, որը կնպաստի համայնքի հայտնիությանը և նոր ներդրումների ներգրավմանը:

❖ **Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը, համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպումը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործում, համայնքային գույքի կառավարումը.**

Ապահովել համայնքի բարեկարգ տեսքը՝

- ✚ հիմնանորոգել ներհամայնքային փողոցները և մայրերը,
- ✚ կառուցել թեքահարթակներ,
- ✚ կառուցել լուսավորության ցանց,
- ✚ հիմնանորոգել մշակույթի տները, նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունները
- ✚ Բարեկարգել քաղաքի բնակավայրերի այգիները, հիմնել նոր այգիներ, պուրակներ, տեղադրել խաղասարքեր, մարզասարքեր
- ✚ Ապահովել աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը համայնքի բոլոր բնակավայրերում,
- ✚ համալրել կոմունալ ծառայության ավտոպարկը բազմաֆունկցիոնալ մեքենաներով,
- ✚ ներդնել աղբահանության նոր մոդել,
- ✚ բնակավայրերում տեղադրել մեծ և փոքր աղբամաններ,
- ✚ կանգառների մոտ տեղադրել տեղեկատվական վահանակներ:

✓ **Պետության պաշտպանության իրականացման աջակցումը, աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը.**

